ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԷԹԻԿԱՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 3

1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ՝ ՈՐՊԵՍ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՄԱՐՄՆԻ ԴԵՐԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ 4

2. ՀԱՆՐԱՅԻՆ ԷԹԻԿԱՅԻ ԵՎ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ/ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ 6

3. ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄ 7

4. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ 13

5. ՀԱՐՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԴԻՄՈՒՄՆԵՐ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄ 16

ՀԱՎԵԼՎԱԾ 17

ՆԱԽԱԲԱՆ

Սույն հաշվետվությունում ներկայացված են Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի՝ (այսուհետ՝ Հանձնաժողով) 2016 թվականի ապրիլի 15-ի N 19-Ա որոշմամբ հաստատված Հանձնաժողովի 2016-2018թթ. ռազմավարությանը և դրա իրականացման միջոցառումների ծրագրին համապատասխան՝ Հանձնաժողովի 2016 թվականին կատարած աշխատանքներն ու դրանց հիմնական արդյունքները՝ Հանձնաժողովի՝ որպես կոռուպցիայի կանխարգելման մասնագիտացված մարմնի դերի բարձրացման, հանրային էթիկայի և շահերի բախման կանխարգելման/կառավարման և հայտարարագրման համակարգերի զարգացման, կոռուպցիայի կանխարգելման ոլորտում ներպետական և միջազգային համագործակցության ամրապնդման, հանրային ծառայության առանձին ոլորտներում էթիկայի հարցերով պատասխանատուների և բարձրաստիճան պաշտոնատար անձանց ու հանրային ծառայողների կարողությունների զարգացման, ինչպես նաև հակակոռուպցիոն կրթության և վերապատրաստումների անցկացման գործընթացներում:

Հանձնաժողովի 2016-2018թթ. ռազմավարության իրականացման միջոցառումների ծրագրով 2016 թվականի համար նախանշված միջոցառումներն իրականացվել են ամբողջությամբ (տե՛ս կից Հավելվածը):

1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ՝ ՈՐՊԵՍ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՄԱՐՄՆԻ ԴԵՐԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

• Կանխարգելիչ հակակոռուպցիոն մարմինների գործառույթների և կառուցվածքային հարցերի առնչությամբ իրականացվել է միջազգային փորձի համալիր ուսումնասիրություն, որի հիման վրա մշակվել են Հանձնաժողովի աշխատակազմի՝ առաջարկվող կառուցվածքի, աշխատակազմի կառուցվածքային միավորների գործառույթների ու աշխատանքների նկարագրության, հաստիքացուցակի, շենքային պայմանների, գույքի և սարքավորումների, ինչպես նաև գործունեության ապահովման ենթակառուցվածքների պահանջարկի հաշվարկի վերաբերյալ նախագծերը և ներկայացվել ՀՀ վարչապետի 2015թ. մայիսի 27-ի թիվ 447–Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբին (այսուհետ՝ Միջգերատեսչական աշխատանքային խումբ) և ՀՀ կառավարությանը:

• Հանձնաժողովի աշխատակազմի ձևավորման մասով մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Դրա հիման վրա ՀՀ կառավարության կողմից Ազգային ժողով է ներկայացվել «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի հետ մեկտեղ Ազգային ժողովի կողմից ընդունվել է առաջին ընթերցմամբ (http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=41402; http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=41377; http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=41392; http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=41397; http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=41407):

• «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերով առաջարկվում է Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին վերապահել բարձրաստիճան պաշտոնատար անձի գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց մասին հայտարարագիրը, ինչպես նաև բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձի գույքի և եկամուտների հայտարարագիրը դրանք ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց կողմից Հանձնաժողով

օրենքով սահմանված ժամկետում չներկայացնելու, կամ հայտարարագրի լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների և հայտարարագրի ներկայացման կարգի խախտմամբ ներկայացնելու, կամ հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու դեպքում վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժեր նշանակելու լիազորություն: Միաժամանակ, «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվում է քրեական պատասխանատվություն սահմանել հայտարարագիրը բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով դիտավորությամբ չներկայացնելու, հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից հայտարարագրում կեղծ տվյալ ներկայացնելու կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելու համար:

• Հանձնաժողովին բարձրաստիճան պաշտոնատար անձանց և հանրային ծառայողների էթիկայի հարցերով համակարգողի գործառույթ վերապահելու հարցի հետ կապված, ուսումնասիրվել են էթիկայի տիպային կանոնագրքի և ուղենիշային դրույթների հիման վրա վարքագծի ոլորտային կանոնագրքերի ընդունման գործընթացին հետևելու միջազգային փորձը, էթիկայի ոլորտում համակարգման գործառույթի իրացման միջազգային մոդելները, որոնք քննարկվել են հանրային ծառայության էթիկայի հարցերով պատասխանատուների, դատախազական և դատական համակարգերի էթիկայի հանձնաժողովների ներկայացուցիչների հետ: Քննարկման արդյունքներով մշակված առաջարկությունները ներկայացվել են ՀՀ վարչապետի 2015 թվականի մայիսի 27-ի թիվ 447-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբին: Հանձնաժողովի՝ էթիկայի հարցերով համակարգման գործառույթի վերաբերյալ օրենսդրական առաջարկությունների փաթեթը ներկայացվել է ՀՀ կառավարություն:

• Ի կատարումն ՀՀ կառավարության 2015 թվականի փետրվարի 19-ի թիվ 145-Ն որոշման, Հանձնաժողովի հայտարարագրման էլեկտրոնային համակարգը 2016 թվականին համակցվել է ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի և իրավաբանական անձանց գրանցման պետական միասնական էլեկտրոնային գրանցամատյաններին, ՀՀ ԿԱ ոստիկանության բնակչության պետական ռեգիստրին և ճանապարհային ոստիկանության տրանսպորտային միջոցների հաշվառման համակարգին, ինչպես նաև ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցամատյանին:

• Մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել «Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության, Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր

պետական եկամուտների կոմիտեի կողմից էլեկտրոնային տեղեկատվական համակարգի միջոցով անձնական տվյալների փոխանցման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

2. ՀԱՆՐԱՅԻՆ ԷԹԻԿԱՅԻ ԵՎ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ/ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Հանրային էթիկայի համակարգի բարեփոխմանն ուղղված առաջարկությունների մշակում

- Հանրային ծառայության ոլորտը կանոնակարգող 22 ոլորտային օրենքների համեմատական վերլուծության միջոցով դուրս են բերված Հայաստանի Հանրապետությունում գործող հանրային էթիկայի համակարգի օրենսդրական բացերը և խնդիրները, որոնք արտացոլված են համապատասխան տեղեկանքում:
- «Հանրային էթիկայի պետական կառավարման մարմինների մոդելները» միջազգային փորձն ամփոփող տեղեկանքը ներկայացված է ՀՀ արդարադատության նախարարություն:
- Միջազգային չափանիշներին և հանձնարարականներին համապատասխան՝ հանրային էթիկայի համակարգի կատարելագործմանն ուղղված առաջարկությունները (Հանձնաժողովին էթիկայի հարցերով համակարգողի դերակատարում վերապահելու մասով) ներկայացված են ՀՀ կառավարություն:

Շահերի բախման վերաբերյալ իրավակարգավորումների կատարելագործմանն ուղղված առաջարկությունների մշակում և ներկայացում ՀՀ կառավարությանը

- Հանրային ծառայության ոլորտը կանոնակարգող 22 ոլորտային օրենքների համեմատական վերլուծության միջոցով վեր են հանված հանրային ծառայողների և բարձրաստիճան պաշտոնատար անձանց շահերի բախման և գործունեության սահմանափակումների՝ գործող իրավակարգավորումների բացերն ու խնդիրները, որոնք արտացոլված են համապատասխան տեղեկանքում:
- Հանրային ծառայողների և բարձրաստիճան պաշտոնատար անձանց շահերի բախման և գործունեության սահմանափակումների հարցերով միջազգային փորձի վերաբերյալ նյութերը տրամադրված են ՀՀ արդարադատության նախարարությանը:
- «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված բարձրաստիճան պաշտոնատար անձի այլ գործունեության սահմանափակումների պահպանումը պարզելու նպատակով Հանձնաժողովն իրականացրել է «առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելու, առևտրային կազմակերպության գույքի հավատարմագրային կառավարիչ լինելու կամ որևէ այլ ձևով առևտրային կազմակերպության ներկայացուցչական, կարգադրիչ կամ կառավարման այլ գործառույթների իրականացմանը ներգրավված լինելու» օրենսդրական դրույթի հիման վրա «Բարձրաստիճան պաշտոնատար անձի այլ գործունեության

սահմանափակումները» թեմայով ուսումնասիրություն, որը ներկայացվել է ՀՀ կառավարություն՝ «… քննարկման առարկա դարձնելու ՀՀ կառավարության մի շարք որոշումների վերաբերելի դրույթները՝ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխանեցնելու հարցը»:

Վարքագծի կանոնագրքերի նախագծերի մշակում

Հանձնաժողովի կողմից մշակվել են բարձրաստիճան պաշտոնատար անձի վարքագծի կանոնագրքի նախագիծը և հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնագրքի նախագիծը, որոնց շուրջ ներկայումս ընթանում են քննարկումներ:

3. ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄ

• Վեր են հանվել բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների ու փոխկապակցված անձանց հայտարարագրման գործող համակարգի խնդիրներն ու օրենսդրական բացերը, ուսումնասիրվել է նաև ակտիվների հայտարարագրման միջազգային փորձը:

Հայտարարագրման գործող համակարգի խնդիրներն ու բացերը, միջազգային լավագույն փորձը ներկայացվել են «Բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրման համակարգի թափանցիկության բարելավման խնդիրներն ու իրականացվող բարեփոխումները» թեմայով 2016 թվականի հոկտեմբերին քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների մասնակցությամբ կազմակերպված միջոցառմանը:

• Հանձնաժողովի կողմից մշակված՝ գույքի և եկամուտների հայտարարագրման համակարգի բարեփոխմանն ուղղված օրենսդրական առաջարկությունները ներկայացված են ՀՀ կառավարություն:

• Հայտարարատու պաշտոնատար անձանց շրջանակի ընդլայնման վերաբերյալ առաջարկությունը ներկայացված է ՀՀ կառավարություն:

• Հանձնաժողովն ակտիվ մասնակցություն է ունեցել հայտարարագրման ռեժիմի կիրարկումն ապահովող իրավական ներգործության (պատասխանատվության) միջոցների սահմանմանն ուղղված օրենքների նախագծերի մշակման գործընթացին՝ ՀՀ արդարադատության նախարարությանը տրամադրելով ակտիվների հայտարարագրմանն առնչվող խախտումների համար ներգործության միջոցների վերաբերյալ միջազգային փորձն ամփոփող տեղեկանք և մշակված առաջարկություններ:

• Հանձնաժողովի որոշմամբ հաստատվել է ԵՄ «Արևելյան գործընկերություն» ծրագրի փորձագետների օժանդակությամբ մշակված հայտարարագրերի վերլուծության և արժանահավատության ստուգման մեթոդաբանությունը:

2016 թվականին Հանձնաժողովն իրականացրել է օրենքով իրեն վերապահված բարձրաստիճան պաշտոնատար անձանց և նրանց հետ փոխկապակցված անձանց հայտարարագրերի *ռեեստրի վարման,* դրանց *վերլուծության* ու *հրապարակման* գործառույթները՝ էլեկտրոնային հայտարարագրման համակարգի միջոցով:

- **Բարձրաստիճան պաշտոնատար անձանց և նրանց հետ փոխկապակցված անձանց ռեեստրը**

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էլեկտրոնային ռեեստրում 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդգրկված է 763 պաշտոնատար անձ և 1027 փոխկապակցված անձ (ամուսին, համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակ, ինչպես նաև համատեղ ապրող ծնող): 2015 թվականի համեմատ բարձրաստիճան պաշտոնատար անձանց թիվն ավելացել է շուրջ 1.8 տոկոսով («Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով[1] բարձրաստիճան պաշտոնատար անձանց պաշտոնների ցանկի ընդլայնման, ինչպես նաև դրանց թվի ավելացման արդյունքում), իսկ փոխկապակցված անձանց թիվը՝ 2.5 տոկոսով:

Ռեեստրում գրանցված բարձրաստիճան պաշտոնատար անձանց բաշխումն՝ ըստ խմբերի 2016թ.



- **Հայտարարագրերի լրացման ու ներկայացման բաղադրիչը**

Հայտարարագրերի առցանց լրացման ու ներկայացման էլեկտրոնային համակարգում 2016 թվականին ստացվել են 2091 հայտարարագրեր: 2015 թվականի համեմատ ներկայացված հայտարարագրերի թիվը աճել է 25.1 տոկոսով: Նման կտրուկ աճը պայմանավորված է 2016 թվականին պաշտոնեական պարտականությունների ստանձնման և դադարեցման ավելի քան 400 դեպքերով:

[1] «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» 17.05.16թ. ՀՕ-53-Ն օրենքը:

2015-2016թթ. ներկայացված հայտարարագրերի ընդհանուր թիվը



- **Հայտարարագրերի վերլուծության բաղադրիչը**

Էլեկտրոնային հայտարարագրման համակարգում անհրաժեշտ նախադրյալներ են ստեղծվել հայտարարագրերում արտացոլված տվյալների արժանահավատության ստուգման, ինչպես նաև որոշ անհամապատասխանությունների բացահայտման համար:

2016 թվականին բարձրաստիճան պաշտոնատար անձանց և նրանց հետ փոխկապակցված անձանց 2091 հայտարարագրերը վերլուծվել են նաև հայտարարագրերի լրացման ուղեցույցի պահանջներին համապատասխանության, ինչպես նաև դրանց ներկայացման ժամկետների պահպանման տեսանկյունից:

2015 թվականի համեմատ՝ 2016 թվականին 1.6 տոկոսով բարելավվել է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետում հայտարարագրերի ներկայացման ցուցանիշը:

2015-2016թթ. սահմանված ժամկետում ներկայացված հայտարարագրերի թիվը



2016 թվականին օրենքով սահմանված ժամկետից ուշ ներկայացված հայտարարագրերի թիվը 2015 թվականի համեմատ աճել է շուրջ 65.7 տոկոսով՝ 277-ից դառնալով 459:

2015-2016թթ. սահմանված ժամկետից ուշ ներկայացված հայտարարագրերի թիվը



2016 թվականին օրենքով սահմանված ժամկետից ուշ հայտարարագրերի ներկայացման վիճակի վատթարացումը բնորոշ է եղել հայտարարագրերի բոլոր տեսակներին: Այդուհանդերձ, առավել էական է պաշտոնի ստանձնման և դադարեցման դեպքերում ուշ ներկայացված հայտարարագրերի թվաքանակի շեշտակի աճը՝ 2015 թվականի համեմատ աճելով համապատասխանաբար՝ շուրջ 4 անգամ՝ 16-ից դառնալով 60 և ավելի քան 4 անգամ՝ 31-ից դառնալով 130:

2015-2016թթ. սահմանված ժամկետից ուշ ներկայացված հայտարարագրերի թիվը՝ ըստ դրանց տեսակների



Հայտարարագրերի՝ սահմանված ժամկետից ուշ ներկայացման բացասական միտման պայմաններում բարելավում է արձանագրվել հայտարարագրերի ներկայացման գործընթացում: 2016 թվականին չներկայացված հայտարարագրերի թիվը նախորդ տարվա համեմատ նվազել է շուրջ 42.5 տոկոսով՝ 80-ից դառնալով 45:

2015-2016թթ. չներկայացված հայտարարագրերի թիվը



Չներկայացված հայտարարագրերի թվի էական կրճատման պայմաններում դեռևս շարունակում է մտահոգիչ մնալ բարձրաստիճան պաշտոնատար անձանց և նրանց հետ փոխկապակցված անձանց հայտարարագրերի չներկայացման դեպքերի ընդհանուր քանակը:

2015-2016թթ. չներկայացված հայտարարագրերի թիվը՝ ըստ դրանց տեսակների



Հայտարարագրերի լրացման ուղեցույցի պահանջներին համապատասխանության տեսանկյունից, 2016 թվականին Հանձնաժողով ներկայացված «ուղղում» ռեժիմով հայտարարագրերի ընդհանուր թիվը 2015

թվականի համեմատ աճել է շուրջ 12.6 տոկոսով՝ 334-ից դառնալով 376: «Ուղղում» ռեժիմով ներկայացված հայտարարագրերի մեծ մասում (83.5 տոկոս) ուղղումները կատարվել են բարձրաստիճան պաշտոնատար անձի (հայտարարատուի) նախաձեռնությամբ:

Հայտարարագրերում ուղղումներ կատարելու վերաբերյալ բարձրաստիճան պաշտոնատար անձանցից ստացված 6 դիմումները բավարարվել են, և Հանձնաժողովը թույլատրել է ուղղումներ կատարել հայտարարագրերում:

4. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Հանձնաժողովը 2016 թվականին շարունակել է համագործակցել միջազգային կազմակերպությունների և կառույցների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ու հանրային ոլորտի կարողությունների զարգացման ծրագրեր իրականացնող կրթական հաստատությունների հետ: Համագործակցությունը միտված է եղել էթիկայի, շահերի բախման և հայտարարագրման համակարգերի զարգացմանը, ոլորտային իրավական ակտերի կատարելագործմանը և էթիկայի հարցերով հանրային ծառայողների, դատական ու դատախազական մարմինների էթիկայի հանձնաժողովների կարողությունների զարգացմանը:

Եվրոպական միության և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության ՍԻԳՄԱ (SIGMA) ծրագրի հետ համագործակցությունն ուղղված է եղել հանրային կառավարման ոլորտի պաշտոնատար անձանց բարեվարքությունը խթանելուն: Մասնավորապես, Հանձնաժողովը ՍԻԳՄԱ ծրագրի ներկայացուցիչներից ստացել է փորձագիտական ու մեթոդական աջակցություն՝ Հանձնաժողովի կողմից մշակված բարձրաստիճան պաշտոնատար անձի վարքագծի կանոնագրքի նախագծի ու դրա ներդրման գործողությունների ծրագրի վերաբերյալ: Կանոնագրքի նախագծի շուրջ քննարկումներ են անցկացվել նաև էթիկայի հարցերով միջազգային փորձագետների հետ: Նախագիծը լրամշակվել է՝ հաշվի առնելով միջազգային գործընկերների հետ քննարկումների արդյունքները և նրանց կողմից ներկայացված կարծիքները:

Եվրոպական միության բյուջետային աջակցության ֆինանսավորման համաձայնագրի՝ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին առնչվող նախապայմանների կատարման շրջանակում Հանձնաժողովը համագործակցել է նաև ԵՄ համապատասխան ներկայացուցիչների և փորձագետների հետ, ինչպես նաև ձեռնարկել գործուն քայլեր դրանց իրականացման ուղղությամբ:

Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների ծրագրի իրականացման, **Եվրոպայի Խորհրդի ԳՐԵԿՈ և**

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) հակակառուպցիոն ցանցի շրջանակներում 2016 թվականին Հանձնաժողովը հետևողականորեն իրացրել է ՏՀԶԿ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի Հակակոռուպցիոն ցանցի 3-րդ փուլի մոնիտորինգի զեկույցի և ԳՐԵԿՈ-ի հանձնարարականների իրականացման գնահատման 4-րդ փուլի արդյունքներով նախատեսված՝ Հանձնաժողովի գործառույթներին առնչվող առաջարկությունները, պարբերաբար մասնակցել ծրագրի մոնիթորինգի ամենամյա աշխատանքներին:

Հանձնաժողովն արդյունավետ համագործակցել է **Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ) հայաստանյան գրասենյակի** հետ, որի աջակցությամբ անցկացվել են էթիկայի առանձին հարցերին առնչվող մի շարք միջոցառումներ՝

- ✓ «Ազգային և միջազգային ջանքերը կիրառական էթիկայի ոլորտում» թեմայով խորհրդաժողովի նպատակն էր պաշտոնատար անձանց բարեխղճությանը ներկայացվող պահանջների, դրանց կիրառման խնդիրների և այդ առնչությամբ միջազգային լավագույն փորձի ներկայացումը և քննարկումը.
- ✓ «Էթիկայի կրթություն» թեմայով միջազգային խորհրդաժողովի նպատակն էր հանրային էթիկայի կրթության միջազգային ծրագրերի, ինչպես նաև դրանք Հայաստանում իրականացնելու հնարավորությունների քննարկումը.
- ✓ «Էթիկայի նորմերի կիրարկման և պրակտիկայի միասնականության ապահովումը» թեմայով աշխատաժողովն ուղղված էր հանրային ծառայության ընտրված ոլորտներում վարքագծի կանոնների պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն և հսկողություն իրականացնող օղակների կարողությունների զարգացմանն աջակցելուն.
- ✓ «Հանրային էթիկայի նորմերի կիրառման առանձնահատկությունները դատախազական և դատական համակարգերում» թեմայով աշխատաժողովի նպատակն էր դատավորների և դատախազների նկատմամբ հանրային էթիկայի նորմերի կիրառմանն առնչվող հարցերի, հանրային էթիկայի կանոնների կիրառումն ապահովող Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի և ոլորտային էթիկայի հանձնաժողովների միջև համագործակցության և հանրային էթիկայի համակարգի բարեփոխման հնարավորությունների քննարկումը:

Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ) հայաստանյան գրասենյակի աջակցությամբ մշակվել և հրապարակվել է հանրային ծառայողների էթիկայի դասընթացի ձեռնարկը, ինչպես նաև ապահովվել է Հանձնաժողովի պաշտոնական կայքէջի անգլերեն թարգմանության ամբողջականացումը:

Հանձնաժողովը ներկայացված է նաև «**Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության** Հայաստանի մասնակցության գործողությունների ծրագրից բխող աշխատանքները համակարգող աշխատանքային խմբի կազմում և 2016 թվականին ամբողջությամբ կատարել է Բաց կառավարման գործընկերության գործողությունների երկրորդ ծրագրով նախատեսված՝ Հանձնաժողովին առնչվող պարտավորությունը:

Ակադեմիական կառույցների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում Հանձնաժողովի անդամներն ակտիվ մասնակցություն են ունեցել հակակոռուպցիոն կրթության, քաղաքացիական հասարակության մասնակցության, գիտելիքների փոխանցման և այլ թեմաներով սեմինարներին, խորհրդաժողովներին և հավաքներին, տրամադրել մասնագիտական խորհրդատվություն:

Հանձնաժողովի՝ **ՀՀ արդարադատության ակադեմիայի** հետ համագործակցության շրջանակում 2016 թվականին ներդրվել է «Կոռուպցիայի դեմ պայքարի հիմնախնդիրները» թեմայով հակակոռուպցիոն դասընթաց դատավորների, դատախազների և քննիչների թեկնածուների, ինչպես նաև վերապատրաստում անցնող դատավորների համար:

Հանձնաժողովը համագործակցում է նաև **Հայաստանի պետական կառավարման ակադեմիայի** հետ՝ հանրային ծառայողների վերապատրաստման դասընթացների շրջանակում իրականացնելով էթիկայի կրթության ծրագրեր:

Հանձնաժողովի գործառույթներին առնչվող հարցերով (հանրային էթիկա, շահերի բախում, հայտարարագրման համակարգ) հանրային իրազեկության բարձրացման նպատակով պատրաստվել են գովազդային և տեղեկատվական պաստառներ, հանրային իրազեկման չորս տեսահոլովակներ:

2016 թվականի ընթացքում Հանձնաժողովն ակտիվ մասնակցություն է ունեցել հակակոռուպցիոն և այլ ուղղվածություններով մի շարք օրինագծերի մշակման (լրամշակման) գործընթացին («Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծեր (04.05.2016թ.), «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծեր (24.08.2016թ.), «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծեր (22.09.2016թ.), «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ (05.12.2016թ.) և այլն)՝ դրանցով առաջադրված կարգավորումների առնչությամբ ներկայացնելով Հանձնաժողովի մոտեցումները, առաջարկությունները և նկատառումները:

5. ՀԱՐՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԴԻՄՈՒՄՆԵՐ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄ

2016 թվականին Հանձնաժողովին են հասցեագրվել ֆիզիկական և իրավաբանական անձանց 17 հարցումներ (2՝ քաղաքացիներից, 10-ը՝ լրագրողներից, 5-ը՝ հասարակական կազմակերպություններից), որոնց տրվել են լիարժեք և համապարփակ պատասխաններ:

2016 թվականին Հանձնաժողովը ֆիզիկական և իրավաբանական անձանցից ստացել են 11 դիմումներ (2՝ քաղաքացիներից, 3-ը՝ լրագրողներից, 6-ը՝ հասարակական կազմակերպություններից):

Դիմումներից հինգում արծարծվել են էթիկայի կանոնների, չորսում՝ շահերի բախման կանոնակարգումների ենթադրյալ խախտումներին առնչվող հարցեր:

Դիմումներից երկուսը վերահասցեագրվել են այլ մարմինների՝ հարցին սահմանված կարգով ընթացք տալու նպատակով:

Մնացած դիմումների հետ կապված, դիմումատուները պատշաճ կարգով տեղեկացվել են դրանք քննարկման արդյունքների մասին:

Հանձնաժողովի գործունեության լուսաբանում

Հանձնաժողովի դիտարկումները ցույց են տալիս, որ ավելացել է լրատվամիջոցների՝ Հանձնաժողովի իրավասությանն առնչվող հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ հրապարակումների թիվը՝ 2015 թվականին արձանագրված 80-ից 2016 թվականին հասնելով 160-ի: Առանձին հրապարակումների կապակցությամբ տրվել են պարզաբանումներ և տրամադրվել է տեղեկատվություն:

2015-2016թթ. լրատվամիջոցների հրապարակումների թիվը



ՀԱՎԵԼՎԱԾ

ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-Ի N 19-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՁՆԱԺՈՂՈՎԻ 2016-2018 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱՁՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016Թ. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ	ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ	ԺԱՄԿԵՏ (ԹԹ.)	ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՑՈՒՑԻՉ	ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔԸ
ԽՆԴԻՐ 1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ՝ ՈՐՊԵՍ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՄԱՐՄՆԻ ԴԵՐԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ				
Հանձնաժողովի կառուցվածքային և գործառնական կարողությունների հզորացում[2]	Կոռուպցիայի կանխարգելման մարմինների կազմակերպական կառուցվածքների ու գործառույթների վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրություն	2016		Կատարված է:
	Հանձնաժողովի աշխատակազմի կառուցվածքի նախագծի մշակում	2016		Կատարված է:

[2] Սույն միջոցառման գործողությունների լիարժեք իրականացումը պայմանավորված է Հանձնաժողովի ֆինանսավորման և աշխատակազմի վերաբերյալ դրույթների օրենսդրական ամրագրման հանգամանքով և համապատասխան օրինադրույթների ուժի մեջ մտնելու ժամկետով:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ	ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ	ԺԱՄԿԵՏ (ԹԹ.)	ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՑՈՒՑԻՉ	ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔԸ
	Հանձնաժողովի կառուցվածքային միավորների գործառույթների և խնդիրների նկարագրության նախագծի մշակում	2016		Կատարված է:
	Հանձնաժողովի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակի, տրամադրվելիք շենքային պայմանների, գույքի ու սարքավորումների, պահանջարկի հաշվարկի, ինչպես նաև բյուջետային հատկացումների ծախսերի գնահատման նախագծի մշակում	2016		Կատարված է:
	Հանձնաժողովի աշխատակազմի ձևավորման հարցերով «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում	2016		Կատարված է:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ	ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ	ԺԱՄԿԵՏ (ԹԹ.)	ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՑՈՒՑԻՉ	ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔԸ
	փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենսդրական առաջարկության մշակում			
	Միջնաժամկետ ծախսերի ծրագրային բյուջետավորման հայտի և տարեկան բյուջետային ֆինանսավորման (հայտի) նախագծերի մշակում	2016-2017		Կատարված է:
Հանձնաժողովի կողմից ընդունված վարքագծի տիպային կանոնագրքի և ուղենիշների հիման վրա վարքագծի ոլորտային կանոնագրքերի ընդունման գործընթացին հետևելու լիազորության վերապահում Հանձնաժողովին[3]	Վարքագծի տիպային կանոնագրքի և ուղենիշների սահմանման, ինչպես նաև հանրային ծառայության առանձին ոլորտների էթիկայի նորմերի ու կանոնագրքերի կիրարկման գործընթացի՝ Հանձնաժողովի	2016		Կատարված է:

[3] Սույն միջոցառման գործողությունների լիարժեք իրականացումը պայմանավորված է Հանձնաժողովին համապատասխան լիազորություն վերապահելու վերաբերյալ դրույթների օրենսդրական ամրագրման հանգամանքով և համապատասխան օրինադրույթների ուժի մեջ մտնելու ժամկետով:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ	ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ	ԺԱՄԿԵՏ (ԹԹ.)	ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՑՈՒՑԻՉ	ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔԸ
	համակարգման գործառույթի վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրություն			
	էթիկայի ոլորտում համակարգման գործառույթի իրացման միջազգային մոդելների ներկայացում և քննարկում հանրային ծառայության էթիկայի հարցերով պատասխանատուների և հանձնաժողովների ներկայացուցիչների հետ	2016		Կատարված է:
	Հանձնաժողովին՝ ոլորտային կանոնագրքերի ընդունման գործընթացին հետևելու լիազորության վերապահման կապակցությամբ առաջարկությունների մշակում	2016		Կատարված է:
ԽՆԴԻՐ 2. ՀԱՆՐԱՅԻՆ ԷԹԻԿԱՅԻ ԵՎ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ/ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ				
Հանրային էթիկայի համակարգի բարեփոխմանն ուղղված	Հայաստանի Հանրապետությունում	2016		Կատարված է:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ	ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ	ԺԱՄԿԵՏ (ԹԹ.)	ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՑՈՒՑԻՉ	ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔԸ
առաջարկությունների մշակում	գործող հանրային էթիկայի համակարգի ուսումնասիրություն, օրենսդրական բացերի և խնդիրների վերհանում			
	Հանրային էթիկայի համակարգերի միջազգային փորձի ուսումնասիրություն	2016		Կատարված է:
	Միջազգային չափանիշներին և հանձնարարականներին համապատասխան հանրային էթիկայի համակարգի կատարելագործմանն ուղղված առաջարկությունների մշակում	2016		Կատարված է:
Շահերի բախման վերաբերյալ իրավակարգավորումների կատարելագործմանն ուղղված առաջարկությունների մշակում և ներկայացում ՀՀ կառավարությանը	Հանրային ծառայողների և բարձրաստիճան պաշտոնատար անձանց շահերի բախման և գործունեության սահմանափակումների՝ գործող իրավակարգավորումների	2016		Կատարված է:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ	ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ	ԺԱՄԿԵՏ (ԹԹ.)	ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՑՈՒՑԻՉ	ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔԸ
	բացերի և խնդիրների վերհանում			
	Հանրային ծառայողների և բարձրաստիճան պաշտոնատար անձանց շահերի բախման և գործունեության սահմանափակումների վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրություն	2016		Կատարված է:
Հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնագրքի ընդունում	Հանրային ծառայողի էթիկայի կանոնների համապատասխանեցում Եվրոպական միության և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության էթիկայի կանոնների հիմնարար սկզբունքներին և չափանիշներին	2016		Կատարված է:
	Հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնագրքի նախագծի մշակում	2016		Կատարված է:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ	ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ	ԺԱՄԿԵՏ (ԹԹ.)	ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՑՈՒՑԻՉ	ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔԸ
Բարձրաստիճան պաշտոնատար անձի[4] վարքագծի կանոնագրքի ընդունում	Բարձրաստիճան պաշտոնատար անձի էթիկայի կանոնների համապատասխանեցում Եվրոպական միության և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության էթիկայի կանոնների հիմնարար սկզբունքներին և չափանիշներին	2016		Կատարված է:
	Բարձրաստիճան պաշտոնատար անձի վարքագծի կանոնագրքի նախագծի մշակում	2016		Կատարված է:
Հանրային էթիկայի, գործունեության սահմանափակումների ու շահերի բախման կառավարման հարցերով ուսումնասիրությունների և ռիսկային ոլորտներում հետազոտությունների	Բարձրաստիճան պաշտոնատար անձանց մասով հանրային էթիկայի, գործունեության սահմանափակումների ու շահերի բախման կառավարման հարցերով ուսումնասիրությունների	2016		Կատարված է:

[4] «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված անձանց շրջանակի համար:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ	ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ	ԺԱՄԿԵՏ (ԹԹ.)	ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՑՈՒՑԻՉ	ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔԸ
անցկացում	և հետազոտությունների թեմաների ընտրություն և հաստատում			
	Բարձրաստիճան պաշտոնատար անձանց մասով հանրային էթիկայի, գործունեության սահմանափակումների ու շահերի բախման կառավարման հարցերով ուսումնասիրությունների և հետազոտությունների անցկացում, դրանց արդյունքների ամփոփում, առաջարկությունների մշակում	2016-2018		Կատարված է:
ԽՆԴԻՐ 3. ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄ				
Հայտարարագրման համակարգի բարեփոխմանն ուղղված առաջարկությունների մշակում և ներկայացում ՀՀ կառավարությանը	Բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների ու փոխկապակցված անձանց հայտարարագրման գործող համակարգի խնդիրների և օրենսդրական բացերի	2016		Կատարված է:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ	ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ	ԺԱՄԿԵՏ (ԹԹ.)	ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՑՈՒՑԻՉ	ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔԸ
	վերհանում			
	Ակտիվների հայտարարագրման միջազգային փորձի ուսումնասիրություն	2016		Կատարված է:
	Հայտարարագրման համակարգի բարեփոխմանն ուղղված առաջարկությունների մշակում	2016		Կատարված է:
Միասնական տեղեկատվական տիրույթի ընդլայնում՝ տեղեկատվության հասանելիության և տվյալների անվտանգության ապահովման նպատակով	«Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին պետական կառավարման առանձին մարմինների կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով մշակված անհատական տվյալների տեղեկատվական բազաներից տվյալների տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 15.02.2015թ. N 145-Ն որոշման մեջ լրացումներ	2016-2018		Կատարված է:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ	ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ	ԺԱՄԿԵՏ (ԹԹ.)	ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՑՈՒՑԻՉ	ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔԸ
	կատարելուն ուղղված առաջարկությունների մշակում և ներկայացում Կառավարություն			
	Անձնական տվյալների տեղեկատվական բազաներին Հանձնաժողովի հասանելության տեխնիկական համակցման աշխատանքների կազմակերպում	2016-2018		Կատարված է:
Հայտարարագրմանն առնչվող կանոնների խախտումների համար իրավական ներգործության միջոցների սահմանում	Ակտիվների հայտարարագրմանն առնչվող խախտումների համար ներգործության միջոցների վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրություն	2016		Կատարված է:
	Հայտարարագրման ոլորտում խախտումների համար պատասխանատվության սահմանման հետ կապված առաջարկությունների	2016		Կատարված է:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ	ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ	ԺԱՄԿԵՏ (ԹԹ.)	ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՑՈՒՑԻՉ	ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔԸ
	մշակում և ներկայացում			
Հայտարարագրված տվյալների անհամապատասխանությունների բացահայտման կառուցակարգերի կատարելագործում	Հանձնաժողովի կողմից հայտարարագրերի վերլուծության և արժանահավատության ստուգման մեթոդիկայի մշակում	2016		Կատարված է:
Բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից ստուգված հայտարարագրերի վերաբերյալ հրապարակային պարզաբանումներ կամ բացատրություններ ներկայացնելու ընթացակարգերի ամրագրում	Բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից հայտարարագրերի վերաբերյալ հրապարակային պարզաբանումներ կամ բացատրություններ ներկայացնելու ընթացակարգերի վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրություն	2016		Կատարված է:
ԽՆԴԻՐ 4. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ				
Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում միջազգային	ՏՀԶԿ հակակոռուպցիոն ցանցի, ԳՌԵԿՈ-ի և այլ	2016-2018		Կատարված է:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ	ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ	ԺԱՄԿԵՏ (ԹԹ.)	ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՑՈՒՑԻՉ	ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔԸ
կառույցների հետ համագործակցության խորացում և համատեղ ծրագրերի իրականացում	միջազգային հակակոռուպցիոն կառույցների մոնիթորինգի զեկույցներում Հանձնաժողովին և պաշտոնատար անձանց էթիկայի համակարգին վերաբերող տեղեկանքների, հարցաշարերի պատասխանների ու հանձնառությունների կատարման վերաբերյալ առաջընթացի զեկույցների պատրաստում			
	«Ինտեգրված փորձագետ» ծրագրի շրջանակներում էթիկայի, շահերի բախման և հայտարարագրման համակարգերի զարգացման հարցերով	2016-2018		Կատարված է:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ	ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ	ԺԱՄԿԵՏ (ԹԹ.)	ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՑՈՒՑԻՉ	ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔԸ
	միջազգային փորձագետի ներգրավում[5]			
	Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում միջազգային կառույցների հետ համագործակցության շրջանակներում Հանձնաժողովի իրավասությանն առնչվող հարցերով օտարերկրյա պատվիրակությունների ներկայացուցիչների, միջազգային փորձագետների հետ համատեղ քննարկումների կազմակերպում և անցկացում	2016-2018		Կատարված է:

[5] Գերմանական միջազգային համագործակցության կազմակերպության (GIZ) հայաստանյան գրասենյակի հետ համատեղ: